

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հունիսի 2026թ.

N 21 - Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ/ՁԵՌՆԱՐԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 5.1-ին և 37-րդ կետերը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- Հաստատել «Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման մեթոդական ուղեցույցը/ձեռնարկը»՝ համաձայն հավելվածի:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

6/23/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ/ՁԵՌՆԱՐԿ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերն ու շինությունները հանդիսանում են կրթական համակարգի առանցքային ենթակառուցվածք, որոնց անվտանգ, հուսալի և անխափան շահագործումը հանդիսանում է պետության և կրթական հաստատությունների առաջնային խնդիրներից մեկը:

2. Կրթական միջավայրը պետք է ապահովի ոչ միայն կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ, այլև առողջ և անվտանգ միջավայր սովորողների, սաների, մանկավարժական և սպասարկող անձնակազմի համար:

3. Շենքերի շահագործման և սպասարկման գործընթացը հանդիսանում է շարունակական և համակարգված գործունեություն, որը ներառում է ինչպես կանխարգելիչ միջոցառումներ, այնպես էլ ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

4. Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման մեթոդական ուղեցույցի/ձեռնարկի (այսուհետ՝ Ուղեցույց) նպատակն է սահմանել հանրակրթական նշանակության շենքերի շահագործման և սպասարկման կազմակերպման միասնական մոտեցումներ, ներկայացնել հիմնական տեխնիկական և կազմակերպական պահանջները, ինչպես նաև տրամադրել կիրառական գործիքներ՝ սպասարկման արդյունավետ համակարգ ձևավորելու համար:

5. Հանրակրթական օբյեկտների շենքերի շահագործումը և սպասարկումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքներով՝

- 1) անվտանգության ապահովում,
- 2) շենքի ֆունկցիոնալության և նախագծային նշանակության պահպանում,
- 3) տեխնիկական և ինժեներական համակարգերի հուսալի և անխափան աշխատանք,
- 4) ռեսուրսների՝ այդ թվում էներգիայի, ջրի և այլ նյութատեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործում,
- 5) կանխարգելիչ մոտեցման (սպասարկման և պլանային վերանորոգման) գերակայություն,
- 6) ժամանակին արձագանք հայտնաբերված թերություններին, վնասվածքներին և վթարային իրավիճակներին,

7) շենքի, շինարարական կոնստրուկցիաների և տարածքի սանիտարահիգիենիկ վիճակի պատշաճ պահպանում,

8) հրդեհային, սեյսմիկ և այլ արտակարգ իրավիճակների անվտանգության պահանջների շարունակական ապահովում,

9) ներառական կրթության պահանջներին համապատասխան շենքի և տարածքի հասանելիության ապահովում հաշմանդամություն ունեցող և սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար,

10) շահագործման, սպասարկման և տեխնիկական զննությունների արդյունքների պատշաճ փաստաթղթավորում և հաշվառում,

11) շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման սկզբունքների կիրառում,

12) գործող նորմատիվ իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և շինարարական նորմերի պահանջների պահպանում:

6. Շենքերի զննությունը և սպասարկումը կազմակերպվում է երկու հիմնական ուղղություններով՝ պարբերական և արտակարգ:

7. Պարբերական զննությունը առաջարկվում է կատարել տարեկան առնվազն երկու անգամ՝ գարնանային և աշնանային ժամանակահատվածներում, իսկ արտակարգ զննությունը իրականացվում է ուժեղ քամիների, ինտենսիվ տեղումների, երկրաշարժերի կամ այլ արտակարգ իրավիճակների ազդեցությունից հետո:

8. Զննման արդյունքները նպատակահարմար է արձանագրել՝ զննման և սպասարկման հաշվառման ձևաթղթում կամ ստուգաթերթում՝ ապահովելով դրանց հետագա վերլուծության և վերահսկման հնարավորությունը:

9. Յուրաքանչյուր հանրակրթական հաստատությունում պետք է կազմվի շենքի շահագործման և սպասարկման տարեկան պլան, որով սահմանվում են շենքի և ինժեներական համակարգերի զննությունների ժամկետները, ծավալները և պատասխանատու անձինք: Զննությունների արդյունքները անհրաժեշտ է փաստաթղթավորել (մատյաններ, հաշվետվություններ): Հաստատությունում պետք է՝

1) նշանակվեն շենքի, ինժեներական համակարգերի և հարակից տարածքների շահագործման ու սպասարկման համար պատասխանատու անձինք,

2) իրականացվեն շենքի և դրա առանձին տարրերի պարբերական, սեզոնային և արտահերթ զննություններ,

3) ապահովվի հայտնաբերված թերությունների, վնասվածքների և վթարավտանգ իրավիճակների գրանցումը, գնահատումը և սահմանված ժամկետներում վերացումը,

4) իրականացվի ինժեներական համակարգերի, սարքավորումների և անվտանգության միջոցների տեխնիկական վիճակի մշտադիտարկում,

5) վարվեն շենքի շահագործման և սպասարկման վերաբերյալ անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթեր, այդ թվում՝ զննությունների, տեխնիկական սպասարկման, վերանորոգման և վթարների հաշվառման մատյաններ,

6) կազմվեն և պահպանվեն կատարված աշխատանքների վերաբերյալ ակտեր, հաշվետվություններ և այլ հիմնավորող փաստաթղթեր,

7) ապահովվի տեխնիկական փաստաթղթերի պահպանությունը, պարբերական թարմացումը և հասանելիությունը վերահսկող և իրավասու մարմինների համար,

8) իրականացվի շահագործման և սպասարկման աշխատանքների արդյունավետության պարբերական գնահատում և անհրաժեշտության դեպքում պլանի վերանայում:

10. Հանրակրթական հաստատությունում վարչատնտեսական մասի պատասպանատու գործադիր մարմինը պատասխանատու է շենքի անվտանգ շահագործման կազմակերպման, սույն ուղեցույցի պահանջների կատարման ապահովման և տեխնիկական վիճակի պարբերական վերահսկման համար:

11. Սույն ուղեցույցով նախատեսված պահանջների կատարման ընդհանուր կազմակերպումն ապահովում է հանրակրթական հաստատության ղեկավարը: Ուղեցույցի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասությունների և ընթացակարգերի շրջանակում:

12. Տնտեսվարական և տեխնիկական անձնակազմը պատասխանատու է սպասարկման աշխատանքների իրականացման, հայտնաբերված թերությունների ժամանակին արձանագրման և վերացման, ինչպես նաև անվտանգության կանոնների պահպանման համար:

13. Սույն ուղեցույցի պահանջները կիրառվում են նախադպրոցական, հանրակրթական դպրոցների, կրթահամալիրների, ուսումնական մասնաշենքերի, օժանդակ և ինժեներական նշանակության շինությունների նկատմամբ:

14. Սույն ուղեցույցը պետական և համայնքային հանրակրթական հաստատությունների համար կիրառվում է պարտադիր, որպես շենքերի և շինությունների շահագործման ու սպասարկման կազմակերպման մեթոդական հիմք, իսկ մասնավոր հանրակրթական հաստատությունների համար կրում է խորհրդատվական բնույթ, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. ՇԵՆՔԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2.1. ՏԱՆԻՔՆԵՐ ԵՎ ՏԱՆԻՔԱԾԱԾԿԵՐ

15. Տանիքը շենքի վերին պատող կոնստրուկցիա է կազմված ձյան, քամու և սեփական քաշից առաջացած բեռնվածքները պատերին և հիմնակմախքին փոխանցող կրող մասերից (ծպեղներ, ֆերմաներ, պանելներ, մարդակներ):

16. Տանիքները պետք է շահագործվեն և սպասարկվեն այնպես, որպեսզի ապահովվի դրանց ամբողջականությունը, ջրաթափանցելիության բացակայությունը և երկարաժամկետ հուսալիությունը՝ իրականացնելով պարբերական և արտակարգ զննություններ:

17. Զննման ընթացքում պարտադիր ստուգվում են տանիքածածկի ամբողջականությունը և հնարավոր վնասվածքների առկայությունը, ջրհորդանների և հեղեղատարների տեխնիկական վիճակը և անցունակությունը, փայլաթիթեղների (roof flashings), կղմինդրների, հանգույցների և միացումների հերմետիկությունը, հարթ տանիքների դեպքում՝ ջրի լճացման առկայությունը և ջրահեռացման արդյունավետությունը, ինչպես նաև ամրացումների հուսալիությունը և

ամրացվածության աստիճանը: Միաժամանակ գնահատվում են կոռոզիայի, ճաքերի, բշտիկների, նյութերի ծերացման և այլ դեգրադացիոն երևույթների առկայությունը:

18. Տանիքների ջրահեռացման համակարգերը, ներառյալ ջրհորդանները և հեղեղատարները, պետք է ապահովեն մթնոլորտային ջրերի անխափան հեռացումը՝ բացառելով ջրի կուտակումը տանիքի մակերևույթին և կոնստրուկցիաների վնասումը, ինչի համար անհրաժեշտ է իրականացնել դրանց պարբերական մաքրում (առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ), կանխել խցանումները և ապահովել վնասված կամ մաշված տարրերի ժամանակին նորոգումը կամ փոխարինումը:



Նկար 1. Խցանված ջրահեռացման համակարգերի օրինակ

19. Տանիքածածկի և դրա կոնստրուկտիվ տարրերի շահագործման ընթացքում չի թույլատրվում կոտրված կամ բացակայող տարրերի, վնասված թաղանթների կամ չհերմետիկացված կարերի առկայություն, որոնք կարող են հանգեցնել ջրի ներթափանցման կամ կոնստրուկցիայի վնասման: Տանիքածածկը պետք է պահպանվի ամբողջական և տեխնիկապես սարքին վիճակում՝ ապահովելով նյութերի համապատասխանությունը նախագծային լուծումներին, ամրացումների հուսալիությունը և տարրերի կայուն ֆիքսվածությունը:

20. Մետաղական տանիքածածկի դեպքում անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ կոռոզիայի կանխման ուղղությամբ, ապահովել համապատասխան պաշտպանիչ ծածկույթների առկայությունը և պահպանումը, ինչպես նաև կիրառել տեխնիկապես հիմնավորված ամրացնող տարրեր՝ նախընտրելով պտուտակային միացումները, որոնք ապահովում են ավելի բարձր հուսալիություն և սպասարկման հեշտություն:




Նկար 2. Տանիքի պաշտպանիչ ծածկույթների օրինակ

21. Տանիքի բոլոր անցումները և միացումները (ծխնելույզներ, օդանցքներ, խողովակներ, արևային վահանակների հանգույցներ և այլ տարրեր) պետք է ապահովեն լիարժեք հերմետիկություն և հուսալի ջրամեկուսացում՝ բացառելով ջրի ներթափանցումը և խոնավության ազդեցությունը կոնստրուկցիաների վրա, իսկ փայլաթիթեղների և միացումների վնասված կամ

մաշված հատվածների դեպքում պետք է ապահովվի դրանց անհապաղ վերականգնումը կամ փոխարինումը:


22. Հարթ տանիքների շահագործման ընթացքում պետք է ապահովվի նախագծային լուծումներով սահմանված թերությունը՝ մթնոլորտային ջրերի արդյունավետ հեռացման համար՝ բացառելով դրանց կուտակումը տանիքի մակերևույթին: Միաժամանակ պետք է պահպանվի ջրամեկուսիչ թաղանթների ամբողջականությունը և տեխնիկական սարքին վիճակը՝ կանխելով ջրի ներթափանցումը կոնստրուկցիայի տարրերի մեջ:



Նկար 3. Տանիքի մակերևույթին ջրի լճացման օրինակ

23. Վնասվածքների կամ դեգրադացիոն երևույթների հայտնաբերման դեպքում պետք է իրականացվեն ոչ միայն վերականգնողական աշխատանքներ, այլ նաև դրանց առաջացման պատճառների վերլուծություն՝ հետագա նմանատիպ խնդիրների կանխարգելման նպատակով:

24. Տանիքների շահագործման ընթացքում պետք է ապահովվի տանիքին հարակից ծառերի և բարձր բուսականության պատշաճ վերահսկումը՝ բացառելով ճյուղերի անմիջական հպումը տանիքածածկին, ջրհորդաններին, հեղեղատարներին, ինժեներական սարքավորումներին և արևային վահանակներին, ինչպես նաև ապահովելով դրանց ժամանակին հատումը կամ նոսրացումը՝ կանխելու մեխանիկական վնասումները, խոնավության կուտակումը, ջրահեռացման խանգարումները և տանիքածածկի կամ սարքավորումների շահագործման խաթարումը:



Նկար 4. Տանիքին հարակից ծառերի ճյուղերի ոչ պատշաճ տեղակայման օրինակ

25. Տանիքի վրա իրականացվող բոլոր աշխատանքները պետք է կատարվեն անվտանգության գործող նորմերի պահպանմամբ՝ ապահովելով աշխատողների կյանքի և առողջության պաշտպանությունը, ընդ որում՝ չի թույլատրվում տանիք բարձրանալ առանց համապատասխան մուտքի միջոցների, ապահովագրող սարքավորումների և անհատական պաշտպանության միջոցների, իսկ բարձրության վրա աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան պատրաստվածություն և անվտանգության իրահանգավորում անցած անձանց կողմից:


2.2. ՊԱՏԵՐ, ՀԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԱՌԱՍՏԱՂՆԵՐ

26. Պատերը, հատակները և առաստաղները հանդիսանում են շենքի կառուցվածքային տարրեր, որոնք ապահովում են տարածքների բաժանումը, շահագործման հարմարավետությունը, ինչպես նաև նպաստում են ջերմամեկուսացման, ձայնամեկուսացման և ներքին միջավայրի հիգիենիկ ու անվտանգ պայմանների ապահովմանը:

27. Պատերի, հատակների և առաստաղների շահագործումն ու սպասարկումը պետք է կազմակերպվեն այնպես, որ բացառվեն դրանց վնասումը, դեֆորմացիան և կրողունակության նվազումը՝ ապահովելով շենքի կոնստրուկցիայի հուսալի և երկարաժամկետ անվտանգ շահագործումը:


28. Զննման ընթացքում պետք է իրականացվի պատերի, հատակների և առաստաղների վիճակի համալիր գնահատում՝ ներառյալ ճաքերի առկայության և դրանց զարգացման դինամիկայի ուսումնասիրությունը, շերտազատումների և հնարավոր փլուզման վտանգի բացահայտումը, խոնավության և ջրաթափանցման նշանների հայտնաբերումը, մակերևույթի հարթության և ամբողջականության գնահատումը, ինչպես նաև ծածկույթների՝ ներկերի, սալիկների, լամինատի և այլ հարդարման նյութերի տեխնիկական վիճակի ստուգումը:

29. Պատերի շահագործման ընթացքում չի թույլատրվում ճաքերի զարգացում, երեսպատման շերտերի պոկում, ինչպես նաև խոնավության ներթափանցում և բորբոսի առաջացում, իսկ ներքին պատերի դեպքում պետք է բացառվեն նաև կեղտոտվածությունը, քերծվածքները, ներկի մաշվածությունը և այլ վնասումները, որոնք կարող են հանգեցնել կոնստրուկցիայի թուլացման և տարածքների հիգիենիկ ու գեղագիտական վիճակի վատթարացման:




Նկար 5. Պատերի ճաքերի, խոնավության ներթափանցման օրինակ

30. Արտաքին պատերը պետք է պաշտպանված լինեն մթնոլորտային ազդեցություններից, իսկ մակերևույթների կեղտոտվածության, աղակալման, կենսաբանական աղտոտման, գունաթափման կամ պաշտպանիչ շերտերի վնասվածությունների հայտնաբերման դեպքում պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումներ՝ ներառյալ մակերևույթների մաքրում և լվացում, վերաներկում, տեղային նորոգում և պաշտպանիչ ծածկույթների վերականգնում՝ ապահովելով դրանց երկարաժամկետ պահպանությունը և դիմակայությունը մթնոլորտային ազդեցություններին:



Նկար 6. Արտաքին պատերի վնասվածքների օրինակ


31. Հատկապես մարզադահլիճներում, միջանցքներում, սրահներում և այլ ընդհանուր օգտագործման տարածքներում պետք է իրականացվեն պարբերական մաքրման, լվացման, վերաներկման և պաշտպանիչ հարդարման միջոցառումներ՝ ապահովելով տարածքների մաքրությունը, անվտանգությունը և պատշաճ տեսքը:



Նկար 7. Պատերի մակերևույթների վնասվածքների և կեղտոտվածության օրինակ

32. Հատակները պետք է ապահովվեն հարթ, կայուն և անվտանգ մակերևույթ՝ նվազեցնելով սայթաքման ռիսկը և դիմակայելով շահագործման բեռնվածություններին, և պահպանվեն տեխնիկապես սարքին վիճակում՝ ապահովելով օգտագործողների անվտանգ տեղաշարժը: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված շոշափելի սալիկները, ուղղորդող մակնշումները և ձայնային ազդարարման համակարգերը պետք է ենթարկվեն պարբերական ստուգման և տեխնիկական սպասարկման՝ ապահովելով դրանց անխափան գործունակությունը:

33. Չի թույլատրվում հատակների վրա ճաքերի, փոսերի, անհարթությունների, վնասված կամ պոկված ծածկույթի, ինչպես նաև խոնավ կամ սայթաքուն մակերևույթների առկայությունը, իսկ հատակների տեսակից կախված պետք է ապահովվի դրանց տեխնիկական համապատասխան վիճակը, մասնավորապես՝ սալիկապատ հատակների դեպքում՝ սալիկների ամրությունը և ամբողջականությունը, իսկ լամինատե և վինիլային ծածկույթի դեպքում՝ դրանց ամբողջականությունը և ամրացվածության հուսալիությունը՝ բացառելով շերտազատումը կամ դեֆորմացիան:



Նկար 8. Հատակի ծածկույթի վնասվածքների օրինակ

34. Առաստաղները պետք է պահպանվեն ամբողջական և տեխնիկապես սարքին վիճակում: Չի թույլատրվում սվաղի կամ հարդարման շերտերի շերտազատումը, կախովի առաստաղների տարրերի թուլացումը, խոնավության ներթափանցումը, բորբոսի առաջացումը, ճաքերի զարգացումը կամ այլ վնասվածքների առկայությունը, որոնք կարող են վտանգել շենքի անվտանգ շահագործումը:

35. Պետք է բացառվի պատերի, հատակների և առաստաղների խոնավացումը, իսկ դրա հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է պարզել պատճառները, վերացնել խոնավության աղբյուրը և իրականացնել համապատասխան չորացման ու վերականգնման աշխատանքներ՝ կանխելով կոնստրուկցիայի տարրերի հետագա վնասումը:

36. Խոնավության հիմնական աղբյուրներ կարող են լինել տանիքից կամ պատուհաններից ներթափանցող մթնոլորտային ջրերը, ինժեներական համակարգերից առաջացող արտահոսքերը և հիմքից բարձրացող խոնավությունը:

37. Պատերի, հատակների և առաստաղների վրա առաջացած ճաքերը ենթակա են դասակարգման՝ տարբերակելով մակերևույթային (ոչ կառուցվածքային) և կառուցվածքային (վտանգավոր) ճաքերը՝ դրանց բնույթի և ազդեցության աստիճանի ճիշտ գնահատման նպատակով:

38. Կառուցվածքային բնույթի ճաքերի հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է ներգրավել համապատասխան մասնագիտացված ինժեներական մասնագետներ՝ իրականացնելու կրողունակության փոփոխության գնահատում և մշակելու կոնստրուկցիայի ամրացման կամ վերականգնման տեխնիկապես հիմնավորված միջոցառումներ:

39. Ճաքերի զարգացումը պետք է ենթարկվի պարբերական մշտադիտարկման՝ կիրառելով համապատասխան նշագրման միջոցներ կամ չափիչ սարքավորումներ, ինչը հնարավորություն կտա գնահատել դրանց դինամիկան և ժամանակին ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ կամ վերականգնողական գործողություններ:

40. Չի թույլատրվում հարդարման շերտերի վնասումը (ներկի շերտազատում, սալիկների պոկում, ծածկույթների մաշվածություն), իսկ անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվեն պարբերական վերանորոգման աշխատանքներ՝ ապահովելով դրանց ամբողջականության և գործառնական հատկությունների վերականգնումը:

41. Պատերի, հատակների և առաստաղների վնասված հատվածները ենթակա են անհապաղ վերացման՝ շահագործման ընթացքում վնասվածքների և պատահարների առաջացումը

բացառելու նպատակով: Վնասվածքների ժամանակին վերացումը կարևոր պայման է շենքի անվտանգ և անխափան շահագործումն ապահովելու համար:

42. Հանրակրթական հաստատություններում պետք է ապահովվեն համապատասխան անվտանգության միջոցառումներ՝ ներառյալ սայթաքման դեմ միջոցների կիրառումը, սուր եզրերի բացակայությունը և անվտանգ ծածկույթների օգտագործումը, որոնք նվազեցնում են վնասվածքների առաջացման ռիսկը և ապահովում են սովորողների և անձնակազմի անվտանգությունը:

2.3. ԴՌՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ

43. Դռները և պատուհանները հանդիսանում են շենքի արտաքին և ներքին պատող տարրերը, որոնք ապահովում են մուտքի և ելքի կազմակերպումը, բնական լուսավորությունը և օդափոխությունը, ինչպես նաև նպաստում են ջերմամեկուսացման և ձայնամեկուսացման ապահովմանը և անվտանգության: Դրանց շահագործումն ու սպասարկումը պետք է իրականացվեն այնպես, որ ապահովվի հուսալի և անվտանգ շահագործում, ինչպես նաև անհրաժեշտ հերմետիկություն:

44. Զննման ընթացքում պետք է իրականացվի դռների և պատուհանների գործառնական և տեխնիկական վիճակի համալիր գնահատում՝ ներառյալ բացման և փակման սահունության ստուգումը, փականների և ծխնիների աշխատանքի գնահատումը, հերմետիկության ապահովման ստուգումը, ապակիների ամբողջականության վերահսկումը, ինչպես նաև շրջանակների՝ փայտե, մետաղական կամ ՊՎՔ նյութերից պատրաստված տարրերի տեխնիկական վիճակի գնահատումը:

45. Դռները պետք է ապահովեն ազատ, անխոչընդոտ և անվտանգ բացում ու փակում՝ համապատասխանելով հրդեհային անվտանգության և տարահանման պահանջներին, իսկ տարահանման դռները պետք է մշտապես լինեն հասանելի և աշխատունակ վիճակում:

46. Չի թույլատրվում դռների խցանումը, դժվարությամբ բացվելը, փականների անսարքությունը կամ դեֆորմացիան (ձևախախտումը), ինչպես նաև տարահանման դռների փակված, արգելափակված կամ դրանց անմիջական հարևանությամբ կահույքի, սարքավորումների և այլ մեծածավալ առարկաների տեղադրումը:



47. Պատուհանները պետք է ապահովեն նախագծային լուծումներով սահմանված բնական լուսավորության, օդափոխության և ջերմամեկուսացման պահանջները: Դրանք պետք է լինեն ամբողջական, անվտանգ և հեշտ կառավարվող, անհրաժեշտության դեպքում՝ հազեցված սահմանափակիչներով:

48. Դռներն ու պատուհանները պետք է ապահովեն օդի և ջրի ներթափանցման նվազագույն մակարդակ՝ պահպանելով ներսի ջերմային և սանիտարահիգիենիկ պայմանները, ինչի համար անհրաժեշտ է ապահովել խտացուցիչների ամբողջականությունն ու գործունակությունը, բացվածքների հուսալի փակումը և անհրաժեշտության դեպքում դրանց ժամանակին փոխարինումն ու կարգավորումը:





Նկար 9. Պատուհանների հերմետիկացման տարրերի օրինակ

49. Շենքերում պետք է կիրառվեն անվտանգ (կոփված կամ լամինացված) ապակիներ, իսկ դրանց վսասման կամ ամբողջականության խախտման դեպքում պետք է ապահովվի անհապաղ փոխարինումը՝ նվազեցնելով վսասվածքների ռիսկը և ապահովելով անվտանգ շահագործումը:



Նկար 10. Կոտրված ապակիների օրինակ

50. Դռների և պատուհանների մեխանիկական տարրերը (ծխնիներ, փականներ և այլն) պետք է ենթարկվեն պարբերական տեխնիկական սպասարկման՝ ապահովելով դրանց յուղումը, կարգավորումը և ժամանակին փոխարինումը, և չի թույլատրվում դրանց մաշվածության անտեսումը, որը կարող է հանգեցնել անսարքությունների և անվտանգության մակարդակի նվազման:



Նկար 11. Դռների և պատուհանների մեխանիկական տարրերի անսարքության օրինակ

51. Չի թույլատրվում մեխանիզմների մաշվածության անտեսումը, քանի որ այն կարող է հանգեցնել անսարքությունների առաջացման, շահագործման խախտումների և անվտանգության մակարդակի նվազման:

2.4. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

52. Սանհանգույցները շենքի ֆունկցիոնալ գոտիներ են, որոնք ապահովում են հիգիենիկ պայմաններ և ինժեներական համակարգերի արդյունավետ օգտագործում: Դրանց շահագործումն ու սպասարկումը պետք է ապահովեն մաքրություն, անվտանգ և անխափան աշխատանք՝ իրականացնելով ամենօրյա և պարբերական վերահսկում:

53. Չննման ընթացքում պետք է իրականացվի սանհանգույցների ինժեներական և սանիտարական համակարգերի համալիր գնահատում՝ ներառյալ ջրամատակարարման համակարգի աշխատանքի ստուգումը, արտահոսքերի հայտնաբերումը, սանիտարական սարքերի՝ լվացարանների, ցնցուղների և այլն, տեխնիկական վիճակի գնահատումը, ջրահեռացման համակարգի անցանելիության ստուգումը, ինչպես նաև օդափոխության համակարգի աշխատանքի համապատասխանությունը նախագծային լուծումներին և արտադրողի տեխնիկական փաստաթղթերին:

54. Հայտնաբերված խնդիրները ենթակա են պարտադիր և անհապաղ արձանագրման ու վերացման՝ ապահովելով սանհանգույցների սանիտարահիգիենիկ և տեխնիկական նորմերի համապատասխանությունը:

55. Սանիտարական սարքերը պետք է պահպանվեն տեխնիկապես պիտանի և ամբողջական վիճակում, չի թույլատրվում կոտրված կամ անսարք սարքերի օգտագործումը, իսկ վսասման կամ արտահոսքի դեպքում պետք է ապահովվի դրանց անհապաղ նորոգումը կամ փոխարինումը:


56. Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, այդ թվում՝ կեղտաջրերի մաքրման կայանը (առկայության դեպքում), պետք է ապահովեն անխափան աշխատանք, բավարար ճնշում և ջրի ազատ հոսք՝ բացառելով արտահոսքերը, խցանումները, ջրի լճացումը և տհաճ հոտերի առաջացումը՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը և շենքի բնականոն շահագործումը:

57. Ջրամատակարարման համակարգերում կուտակիչ բաքերի առկայության դեպքում դրանք պետք է ենթարկվեն պարբերական մաքրման և ախտահանման՝ առնվազն տարեկան երկու անգամ, ինչպես նաև երկարատև չշահագործումից հետո՝ մինչև շահագործման վերսկսումը:

58. Սանհանգույցները պետք է ենթարկվեն ամենօրյա (անհրաժեշտության դեպքում՝ առավել հաճախ) մաքրման և ախտահանման՝ ապահովելով հատակների և պատերի մաքրությունը, սարքերի պատշաճ հիգիենիկ վիճակը, աղբի ժամանակին հեռացումը և անհրաժեշտ հիգիենիկ պարագաների մշտական առկայությունը:

59. Սանհանգույցները պետք է ապահովված լինեն գործող սանիտարահիգիենիկ և նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան արդյունավետ (բնական կամ մեխանիկական) օդափոխությամբ՝ ապահովելով խոնավության նվազեցում, տհաճ հոտերի և բորբոսի առաջացման կանխում, ինչպես նաև օդափոխության համակարգի պարբերական մաքրում և տեխնիկական սպասարկում՝ դրա անխափան աշխատանքի համար:

60. Սանհանգույցների հատակները պետք է լինեն ջրակայուն, հակասայթաքուն և հեշտ մաքրվող՝ ապահովելով ջրի արդյունավետ հեռացումը և անվտանգ շահագործումը, իսկ պատերը՝ լվացվող և խոնավակայուն: Չի թույլատրվում հատակին ջրի կուտակումը կամ սայթաքման վտանգավոր պայմանների առաջացումը:



Նկար 12. Սանհանգույցների ոչ պատշաճ շահագործման օրինակ

61. Սանհանգույցներում պետք է ապահովվի շահագործման անվտանգության բարձր մակարդակ՝ ներառյալ սայթաքման կանխարգելումը, էլեկտրական անվտանգության պահանջների պահպանումը և վսասված կամ անսարք տարրերի բացակայությունը, որոնք կարող են վտանգել օգտագործողների առողջությունը և անվտանգությունը:

62. Հանրակրթական հաստատություններում լրացուցիչ պետք է ապահովվի երեխաների համար անվտանգ սանիտարական սարքերի կիրառումը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ տարիքային առանձնահատկություններին համապատասխան չափերի սանիտարական սարքերի առկայությունը՝ ապահովելով դրանց հարմարավետ և անվտանգ օգտագործումը:

2.5. ԻՆՑԵՆԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ


63. Ինժեներական համակարգերը (ջրամատակարարում, ջրահեռացում, ջեռուցում, օդափոխություն, էլեկտրամատակարարում, գազամատակարարում և հակահրդեհային համակարգեր) պետք է շահագործվեն և սպասարկվեն այնպես, որ ապահովվի դրանց անվտանգ, հուսալի և էներգաարդյունավետ աշխատանքը:

64. Պետք է ապահովվի սարքավորումների տեխնիկական վիճակի շարունակական մշտադիտարկումը, չափիչ սարքերի, սենսորների և այլ վերահսկող սարքավորումների ճիշտ և հուսալի աշխատանքը, ինչպես նաև համակարգերի ժամանակին կարգաբերումն ու օպտիմալացումը՝ դրանց արդյունավետության բարձրացման նպատակով:

65. Օդափոխության և օդորակման համակարգերը պետք է ապահովեն օդափոխության, օդի որակի և խոնավության՝ նախագծային լուծումներով, արտադրողի տեխնիկական փաստաթղթերով և գործող նորմատիվատեխնիկական պահանջներով սահմանված պայմանները՝ պահպանվելով աշխատունակ և մաքուր վիճակում, իսկ դրանց սպասարկումը պետք է իրականացվի պարբերաբար՝ ներառյալ ֆիլտրների մաքրում կամ փոխարինում (յուրաքանչյուր 3–6 ամիսը մեկ), օդատարների մաքրում (առնվազն տարեկան մեկ անգամ) և սարքավորումների տեխնիկական վիճակի ստուգում:

66. Էլեկտրամատակարարման համակարգը պետք է ապահովի անվտանգ և անխափան աշխատանք՝ պահպանելով տեխնիկական և անվտանգության նորմերը, իսկ համակարգի սպասարկումը պետք է իրականացվի պարբերաբար՝ ներառյալ էլեկտրական վահանակների ստուգումը (առնվազն ամսական), մալուխների և միացումների վերահսկումը:

67. Լուսավորության համակարգը պետք է ապահովի անհրաժեշտ լուսավորություն (նախագծային լուծումներին համապատասխան), իսկ լամպերի և սարքերի փոխարինումը իրականացվի ըստ անհրաժեշտության:



Նկար 13. Ինժեներական համակարգերի ոչ պատշաճ շահագործման օրինակ

68. Չի թույլատրվում վնասված լարերի շահագործումը, չարտոնված միացումների իրականացումը կամ էլեկտրական ցանցերի գերբեռնվածությունը, որոնք կարող են հանգեցնել վթարային իրավիճակների, հրդեհների և սարքավորումների վնասման:

69. Գազամատակարարման համակարգերը պետք է ապահովեն անվտանգ և հուսալի շահագործում՝ պահպանելով տեխնիկական և անվտանգության պահանջները, ապահովելով գազի արտահոսքերի բացակայությունը, սարքավորումների պատշաճ վիճակը և համապատասխան օդափոխությունը:

70. Գազային սարքերի ինքնակամ վերանորոգումը կամ միջամտությունը չի թույլատրվում, քանի որ դա կարող է հանգեցնել վթարների, պայթյունների և առողջության համար վտանգավոր հետևանքների:

71. Հակահրդեհային համակարգերը պետք է ապահովեն հրդեհի վաղ հայտնաբերում, ազդանշանային համակարգերի անխափան և հուսալի աշխատանք, ինչպես նաև հրդեհաշիջման միջոցների բավարար և մշտական առկայություն՝ շենքի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով:

72. Համակարգերի սպասարկումն պետք է իրականացնել պարբերական հիմունքներով՝ ապահովելով դրանց պատրաստվածությունը և արդյունավետ աշխատանքը: Ազդանշանային համակարգերի ստուգումը նպատակահարմար է իրականացնել պարբերաբար, իսկ կրակմարիչների տեխնիկական վիճակի ստուգումը՝ գործող նորմատիվ իրավական ակտերով և արտադրողի տեխնիկական փաստաթղթերով սահմանված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ:

73. Շենքի ինժեներական համակարգերի շահագործման ընթացքում պետք է ապահովվի էներգիայի արդյունավետ օգտագործումը՝ նպաստելով ռեսուրսների օպտիմալ կառավարմանը և շահագործման ծախսերի նվազեցմանը, ինչպես նաև իրականացվի անվտանգության գործող կանոնների և նորմերի պահպանմամբ՝ ապահովելով շենքի օգտվողների կյանքի և առողջության պաշտպանությունը:

74. Պետք է իրականացվեն միջոցառումներ ջերմային կորուստների նվազեցման ուղղությամբ, ապահովվի սարքավորումների օպտիմալ և ռացիոնալ շահագործումը, ինչպես նաև կիրառվեն

էներգախնայող տեխնոլոգիաներ և լուծումներ՝ բարձրացնելու համար համակարգերի ընդհանուր արդյունավետությունը և կայունությունը:

75. Պետք է ապահովվի էլեկտրական, գազային և հրդեհային անվտանգության պահանջների պատշաճ կատարումը՝ կանխելով վթարների, վնասվածքների և արտակարգ իրավիճակների առաջացումը:

2.6. ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՆԵՐ


76. Ջեռուցման համակարգերը և կաթսայատները շենքի կարևոր ինժեներական համակարգեր են, որոնք ապահովում են նորմատիվ ջերմային պայմաններ: Դրանց շահագործումն ու սպասարկումը պետք է իրականացվեն անվտանգության պահանջների պահպանմամբ և միայն որակավորված մասնագետների կողմից:

77. Շենքերում կարող են կիրառվել տարբեր տեսակի ջեռուցման համակարգեր, ներառյալ ջրային ջեռուցման համակարգերը, գազային կաթսաներով աշխատող համակարգերը, էլեկտրական ջեռուցման համակարգերը, ինչպես նաև տեղային կամ անհատական ջեռուցման սարքերը՝ կախված շենքի գործառնական առանձնահատկություններից և տեխնիկական հնարավորություններից:

78. Ջեռուցման համակարգը պետք է ապահովի նորմատիվ ջերմաստիճանային պայմաններ, ջերմության հավասարաչափ բաշխում և անխափան աշխատանք ամբողջ ջեռուցման սեզոնի ընթացքում՝ ներառյալ ճնշման ու ջերմաստիճանի վերահսկումը և համակարգից օդի ժամանակին հեռացումը:

79. Չի թույլատրվում համակարգի ինքնակամ փոփոխությունը կամ անսարք սարքավորումների շահագործումը, որոնք կարող են հանգեցնել համակարգի աշխատանքի խափանումների, արդյունավետության նվազման և անվտանգության ռիսկերի առաջացման:


80. Կաթսայատները պետք է շահագործվեն գործող տեխնիկական և անվտանգության պահանջների պահպանմամբ՝ ապահովելով կաթսաների տեխնիկական պիտանիությունը, վառելիքի անվտանգ ու արդյունավետ օգտագործումը և համակարգի հուսալի աշխատանքը:



Նկար 14. Ջեռուցման համակարգի տարրերի անսարքության օրինակ

81. Կաթսայատներում պետք է ապահովվեն արդյունավետ օդափոխություն, հրդեհային անվտանգության պահանջների կատարում և գազի արտահոսքի վերահսկում, ինչպես նաև սարքավորումների անվտանգ սպասարկման պայմաններ, անձնակազմի անվտանգ մուտք ու ելք, վթարային անջատման համակարգերի և համապատասխան չափիչ-վերահսկող սարքերի առկայություն՝ ապահովելով համակարգի անվտանգ, հուսալի և արդյունավետ շահագործումը:

82. Զեռուցման համակարգերը պետք է ենթարկվեն սեզոնային նախապատրաստման և պարբերական տեխնիկական սպասարկման՝ ներառյալ կաթսաների մաքրում և կարգաբերում, խողովակաշարերի, ռադիատորների և փականների տեխնիկական վիճակի ստուգում՝ ապահովելով դրանց անխափան և անվտանգ շահագործումը:



Նկար 15. Զեռուցման համակարգի վերահսկման սարքերի օրինակ

83. Վթարների կամ անսարքությունների դեպքում պետք է ապահովվի դրանց անհապաղ վերացումը, ինչպես նաև ջեռուցման համակարգերի շահագործման ընթացքում իրականացնել ճնշման և ջերմաստիճանի վերահսկում, գերտաքացման կանխում և վթարային անջատման հնարավորությունների ապահովում:

84. Չի թույլատրվում կաթսայատներում դյուրավառ նյութերի պահումը, չարտոնված անձանց մուտքը կամ սարքավորումների շահագործումը առանց համապատասխան վերահսկման, քանի որ նշված հանգամանքները կարող են հանգեցնել արտակարգ իրավիճակների, հրդեհների կամ այլ վտանգավոր հետևանքների:



85. Զեռուցման համակարգերը պետք է շահագործվեն էներգախնայող և ռացիոնալ ռեժիմով՝ ապահովելով ջերմամեկուսացման պատշաճ մակարդակ, սարքավորումների օպտիմալ կարգավորում և ջերմային կորուստների նվազեցում՝ համակարգի արդյունավետության բարձրացման և ծախսերի կրճատման նպատակով:

2.7. ԱՐԵՎԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ (ՖՈՏՈՎՈՒՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ)

86. Արևային (ֆոտովոլտային) համակարգերը պետք է շահագործվեն և սպասարկվեն անվտանգ և արդյունավետ՝ համապատասխան նորմերին, և ներառեն վահանակներ, ինվերտորներ, մոնիտաժային և էլեկտրական տարրեր, որոնք պետք է պահպանվեն տեխնիկապես պիտանի վիճակում:

87. Ստուգման ընթացքում պետք է իրականացվի համակարգի տեխնիկական վիճակի համալիր գնահատում՝ ներառյալ վահանակների մակերևույթի մաքրության վիճակը, մեխանիկական վնասվածքների՝ ճաքերի կամ կոտրվածքների առկայությունը, ամրացման համակարգի կայունությունը, էլեկտրական միացումների հուսալիությունը, ինչպես նաև ինվերտորի աշխատանքային ցուցանիշների համապատասխանությունը նախագծային պարամետրերին:



88. Ստուգման արդյունքները ենթակա են պարտադիր արձանագրման տեխնիկական մատյանում կամ համապատասխան հաշվառման համակարգում՝ ապահովելով դրանց հետագա վերլուծության և վերահսկման հնարավորությունը:



Նկար 16. Ֆոտովոլտային վահանակների ոչ պատշաճ վիճակի օրինակ

89. Ֆոտովոլտային համակարգերի շահագործման ընթացքում առավել հաճախ հանդիպող խնդիրները ներառում են վահանակների մակերևույթի աղտոտումը՝ փոշու, տերևների կամ ձյան կուտակման հետևանքով, արտադրողականության նվազումը, մալուխների մեխանիկական վնասումները, մոնտաժային կոնստրուկցիաների թուլացումը, ինչպես նաև ինվերտորի անսարքությունները:

90. Ֆոտովոլտային համակարգերի սպասարկումը պետք է ներառի վահանակների պարբերական մաքրում՝ առանց քերծող նյութերի կիրառման, ձյան և կուտակված աղբի հեռացում, մոնտաժային համակարգի ամրության ստուգում և անհրաժեշտության դեպքում ամրացում, էլեկտրական միացումների տեխնիկական վիճակի վերահսկում և անհրաժեշտության դեպքում վերանորոգում, ինչպես նաև ինվերտորի ծրագրային և տեխնիկական վերահսկում՝ ապահովելով համակարգի արդյունավետ և անխափան աշխատանքը:



Նկար 17. Ֆոտովոլտային համակարգերի սպասարկման աշխատանքների օրինակ

91. Ֆոտովոլտային համակարգերի սպասարկման ընթացքում պետք է պահպանվեն անվտանգության բոլոր պահանջները՝ աշխատանքները հնարավորության դեպքում իրականացնելով հոսանքազերծված վիճակում, կիրառելով համապատասխան անհատական պաշտպանության միջոցներ և ապահովելով բարձրության վրա աշխատանքի անվտանգությունը, ինչպես նաև կազմակերպելով դրանք համապատասխան եղանակային պայմաններում:

92. Ֆոտովոլտային համակարգերի վրա աշխատանքների իրականացումը նպատակահարմար է կազմակերպել համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձանց միջոցով՝ գործող իրավական ակտերի, տեխնիկական անվտանգության պահանջների և արտադրողի տեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ համակարգի անվտանգ և հուսալի շահագործումն ապահովելու նպատակով:

93. Ֆոտովոլտային համակարգի արդյունավետությունը պետք է պարբերաբար վերահսկվի՝ ներառյալ արտադրողականության հաշվառումը և ցուցանիշների մշտադիտարկումը, իսկ շեղումների կամ կտրուկ նվազման դեպքում պետք է ապահովվի համակարգի անհապաղ ախտորոշումն ու վերականգնումը:

94. Ֆոտովոլտային համակարգերի սպասարկումը պետք է իրականացվի կանխարգելիչ սկզբունքով՝ ներառելով պարբերական մաքրում, տեխնիկական վիճակի ստուգում և թերությունների ժամանակին վերացում՝ ապահովելով արդյունավետ աշխատանք, անսարքությունների նվազեցում և սարքավորումների ծառայության ժամկետի երկարացում:

3. ԱՐՏԱՔԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

95. Արտաքին տարածքները հանդիսանում են հանրակրթական նշանակության օբյեկտների անբաժանելի մասը և ապահովում են սաների, աշխատակիցների և այցելուների անվտանգ, հարմարավետ և կազմակերպված տեղաշարժը, հանգիստը և գործունեությունը:



96. Արտաքին տարածքների պատշաճ շահագործումը և սպասարկումը նպաստում են տարածքի գեղագիտական տեսքի պահպանմանը, վնասվածքների և վթարների ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև տարածքի ֆունկցիոնալ արդյունավետ օգտագործմանը՝ ապահովելով բարեկարգ և անվտանգ միջավայր:

97. Արտաքին տարածքների սպասարկումը պետք է իրականացվի պարբերական, պլանավորված և սեզոնային մոտեցմամբ՝ ներառելով մաքրման, վերանորոգման, կանաչապատման և անվտանգության ապահովման միջոցառումներ՝ ապահովելով տարածքների պատշաճ տեխնիկական և սանիտարական վիճակը:

3.1. ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

98. Բակային տարածքները պետք է պահպանվեն մաքուր, անվտանգ և օգտագործման համար հարմար վիճակում:

99. Բակային տարածքների տեխնիկական վիճակի վերահսկումը պետք է իրականացվի պարբերական ստուգումների միջոցով՝ ներառյալ մակերևույթների հարթության գնահատումը, աղբի և օտար առարկաների առկայության հայտնաբերումը, վնասված հատվածների բացահայտումը, ինչպես նաև ջրի կուտակումների առկայության վերահսկումը:



Նկար 18. Բակային տարածքների և հետիոտնային անցուղիների վնասվածքների օրինակ

100. Բակային տարածքներում առավել հաճախ հանդիպող խնդիրներն են մակերևույթների անհարթությունները, աղբի կուտակումը, փոսերի և ճաքերի առաջացումը, ինչպես նաև ջրի լճացումը, որոնք կարող են բացասաբար ազդել տարածքի անվտանգ և արդյունավետ շահագործման վրա:



101. Բակային տարածքների պատշաճ շահագործումն ապահովելու նպատակով պետք է իրականացվի դրանց պարբերական մաքրում, վնասված հատվածների հարթեցում և վերանորոգում, ջրահեռացման համակարգերի ապահովում, ինչպես նաև սեզոնային սպասարկում (ներառյալ ձյան և սառույցի հեռացում)՝ ապահովելով անվտանգ տեղաշարժը:

102. Պետք է բացառվեն սայթաքուն կամ վտանգավոր հատվածների առկայությունը, ապահովվի անվտանգ և անխոչընդոտ տեղաշարժը, իսկ վտանգավոր հատվածների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է դրանք ժամանակավորապես սահմանափակել կամ մեկուսացնել՝ մինչև թերությունների վերացումը:

3.2. ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

103. Խաղահրապարակները նախատեսված են երեխաների ֆիզիկական ակտիվության, զարգացման և ժամանցի կազմակերպման համար, ուստի դրանց անվտանգությունը հանդիսանում է առաջնահերթ պահանջ՝ ապահովելով երեխաների առողջ և անվտանգ միջավայր:

104. Խաղահրապարակների տեխնիկական վիճակի վերահսկումը պետք է իրականացվի պարբերական ստուգումների միջոցով՝ ներառյալ խաղասարքերի ամրության գնահատումը, շարժական մասերի աշխատանքի ստուգումը, ծածկույթի վիճակի վերահսկումը՝ անկախ նրանից այն ռետինե, ավազային կամ այլ տեսակի է, ինչպես նաև սուր եզրերի կամ վնասվածքների առկայության բացահայտումը:



Նկար 19. Խաղահրապարակների սարքավորումների վնասվածքների օրինակ

105. Խաղահրապարակներում առավել հաճախ հանդիպող խնդիրներն են սարքերի թուլացումը, ծածկույթի մաշվածությունը կամ վնասվածությունը, սարքերի առանձին տարրերի կոտրվածքները և սուր եզրերի առաջացումը, որոնք կարող են վտանգել երեխաների անվտանգությունը:

106. Խաղահրապարակների պատշաճ շահագործումն ապահովելու նպատակով պետք է իրականացվեն սարքերի ամրացման և վերանորոգման աշխատանքներ, վնասված տարրերի ժամանակին փոխարինում, ծածկույթի վերականգնում, ինչպես նաև տարածքի պարբերական մաքրում՝ ապահովելով անվտանգ և հարմարավետ միջավայր:

107. Չի թույլատրվում վնասված խաղասարքերի շահագործումը, և պարտադիր է դրանց պարբերական տեխնիկական ստուգումը՝ ապահովելով անվտանգության նորմերի լիարժեք պահպանումը և երեխաների պաշտպանության բարձր մակարդակը:

3.3. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ԱՆՑՈՒՂԻՆԵՐ

108. Ճանապարհները և անցուղիները պետք է ապահովեն մարդկանց անվտանգ, հարմարավետ և անխափան տեղաշարժը՝ համապատասխան շահագործման և անվտանգության գործող պահանջներին:

109. Ճանապարհների և անցուղիների տեխնիկական վիճակի վերահսկումը պետք է իրականացվի պարբերական ստուգումների միջոցով՝ ներառյալ ծածկույթի ամբողջականության գնահատումը, ճաքերի և փոսերի հայտնաբերումը, նշագծերի տեսանելիության ստուգումը, ինչպես նաև ջրահեռացման համակարգերի վիճակի վերահսկումը:



Նկար 20. Ճանապարհների և անցուղիների ոչ պատշաճ պահպանման օրինակ

110. Ճանապարհների և անցուղիների շահագործման ընթացքում առավել հաճախ հանդիպող խնդիրներն են փոսերի և անհարթությունների առաջացումը, սայթաքուն մակերևույթների ձևավորումը, ինչպես նաև ջրի կուտակումը, որոնք կարող են վտանգել անվտանգ տեղաշարժը:

111. Ճանապարհների և անցուղիների պատշաճ շահագործումն ապահովելու նպատակով պետք է իրականացվի ծածկույթի ժամանակին վերանորոգում, ձմեռային պայմաններում՝ ձյան և սառույցի հեռացում, հակասայթաքուն նյութերի կիրառում, ինչպես նաև նշագծերի պարբերական թարմացում՝ ապահովելով դրանց տեսանելիությունը և գործառնական արդյունավետությունը:

112. Պետք է ապահովվի ճանապարհների և անցուղիների տեսանելիությունը՝ նախագծային լուծումներով, տարածքի շահագործման պայմաններով և գործող անվտանգության պահանջներով սահմանված չափանիշներին համապատասխան, ինչպես նաև սահմանվեն և պահպանվեն անվտանգ երթևեկության ուղիներ՝ նվազեցնելով վթարների և վնասվածքների առաջացման ռիսկը:

3.4. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

113. Զրահեռացման համակարգերը նախատեսված են անձրևաջրերի և հալոցքային ջրերի արդյունավետ հեռացման համար՝ ապահովելով արտաքին տարածքների անվտանգ և անխափան շահագործումը և կանխելով ջրի կուտակումը:

114. Զրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակի վերահսկումը պետք է իրականացվի պարբերական ստուգումների միջոցով՝ ներառյալ ջրահեռացման ուղիների

մաքրության գնահատումը, խցանումների առկայության բացահայտումը, ինչպես նաև ջրի հոսքի արդյունավետության ստուգումը:

115. Ջրահեռացման համակարգերում առավել հաճախ հանդիպող խնդիրներն են խցանումների առաջացումը, ջրի լճացումը և համակարգի տարրերի վնասումները, որոնք կարող են խաթարել դրանց բնականոն աշխատանքը և ստեղծել վտանգավոր իրավիճակներ:

116. Ջրահեռացման համակարգերի պատշաճ շահագործումն ապահովելու նպատակով պետք է իրականացվի խողովակների և ջրանցքների պարբերական մաքրում, վնասված հատվածների ժամանակին վերանորոգում, ինչպես նաև ապահովվի ջրի անխափան հոսքը՝ կանխելով խցանումների և կուտակումների առաջացումը:

117. Պետք է ապահովվի ջրի կուտակումների կանխումը և բացառվեն սայթաքման վտանգավոր պայմանները՝ ապահովելով մարդկանց անվտանգ տեղաշարժը արտաքին տարածքներում:

3.5. ԿԱՆԱՀԱՊԱՏ ՏԱՐԱԾՔՆԵՐ

118. Կանաչապատ տարածքները նպաստում են առողջ և բարեկարգ միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև ապահովում են տարածքի գեղագիտական տեսքը՝ բարելավելով օգտվողների հարմարավետությունը և ընդհանուր միջավայրի որակը:

119. Կանաչապատ տարածքների վիճակի վերահսկումը պետք է իրականացվի պարբերական ստուգումների միջոցով՝ ներառյալ բույսերի ընդհանուր վիճակի գնահատումը, չորացած կամ վտանգավոր ծառերի հայտնաբերումը, ինչպես նաև ոռոգման համակարգի աշխատանքի վերահսկումը:

120. Կանաչապատ տարածքներում առավել հաճախ հանդիպող խնդիրներն են բույսերի չորացումը, անկանոն աճը և ոռոգման համակարգերի խափանումները, որոնք կարող են բացասաբար ազդել տարածքի տեսքի և կենսունակության վրա:

121. Կանաչապատ տարածքների պատշաճ պահպանման նպատակով պետք է իրականացվի կանոնավոր ոռոգում, խոտհնձում, ծառերի և թփերի էտում, ինչպես նաև չորացած կամ վնասված բույսերի ժամանակին հեռացում՝ ապահովելով տարածքի առողջ և բարեկարգ վիճակը:

122. Պետք է ապահովվի վտանգավոր ճյուղերի և վնասված ծառերի ժամանակին հեռացումը, ինչպես նաև տեսանելիության պահպանումը՝ ապահովելով անվտանգ տեղաշարժը և տարածքի անվտանգ շահագործումը:

3.6. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

123. Արտաքին լուսավորությունը նախատեսված է տարածքների անվտանգ և արդյունավետ օգտագործումն ապահովելու համար մութ ժամերին՝ նպաստելով մարդկանց անվտանգ տեղաշարժին և տարածքի հսկողությանը:

124. Արտաքին լուսավորության համակարգերի տեխնիկական վիճակի վերահսկումը խորհուրդ է տրվում իրականացնել պարբերական ստուգումների միջոցով՝ դիտարկել լուսարձակների աշխատունակությունը, մալուխների և էլեկտրական տարրերի տեսանելի

վնասվածքների բացակայությունը, ինչպես նաև լուսավորության կազմակերպման համապատասխանությունը նախագծային լուծումներին, արտադրողի տեխնիկական փաստաթղթերին և կիրառելի նորմատիվ պահանջներին:



Նկար 21. Արտաքին լուսավորության համակարգի անսարքության օրինակ

125. Խափանված լամպերի, մալուխների վնասումների, լուսարձակների անսարքությունների կամ արտաքին լուսավորության համակարգի՝ նախագծային լուծումներին, գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերին և էլեկտրական անվտանգության պահանջներին անհամապատասխանության հայտնաբերման դեպքում պետք է իրականացվեն համապատասխան վերականգնողական միջոցառումներ՝ ներառյալ լամպերի փոխարինում, էլեկտրական համակարգերի վերանորոգում, լուսարձակների կարգաբերում կամ փոխարինում՝ ապահովելով լուսավորության համակարգի համապատասխանությունը սահմանված պահանջներին:

